

**ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐ
ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ
ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

§ 5. ԹՎԱՅԻՆ ՈՒՂԻՂ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ

**3. Կետի կոորդինատներ հարթության վրա:
Կոորդինատային հարթություն**

Թվային հարթության կետերի համար նույնպես կարելի է օգտագործել երկրաչափական տերմինաբանություն: Այսպես, օրինակ, այն բոլոր $(x; y)$ կետերի բազմությունը, որոնց կոորդինատները բավարարում են $3x - y + 2 = 0$ հավասարությանը, բնական է անվանել **ուղիղ**, քանի որ կոորդինատային հարթության վրա այդ բազմության պատկերն ուղիղ գիծ է:


R^2 հարթության բոլոր այն $(x; y)$ կետերի բազմությունը, որոնց կոորդինատները բավարարում են $x^2 + y^2 \leq 25$ անհավասարությանը, կոորդինատային հարթության վրա պատկերվում է որպես 5 շառավղով շրջան, որի կենտրոնը կոորդինատների սկզբնակետն է: Թվային հարթության այդպիսի ենթաբազմությունը ևս կոչվում է 5 շառավղով և $(0; 0)$ կենտրոնով **շրջան**:

Օրինակ: Կոորդինատային հարթության վրա պատկերենք բոլոր այն $(x; y)$ կետերը, որոնցից յուրաքանչյուրը բավարարում է

$$(x + y) \cdot (2x - 5) = 0$$

հավասարությանը:

Ամենից առաջ նկատենք, որ տրված հավասարությունը տեղի ունի միայն այն դեպքում, երբ $y = -x$ կամ $x = 2,5$: Հետևաբար, որոնելի $(x; y)$ կետերի բազմությունը $y = -x$ և $x = 2,5$ ուղիղների միավորումն է (նկ. 1):



Նկ. 1